Հավելված N 1
Սպիտակ համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի ____-ի թիվ ____-Ա որոշման

ԿԱՐԳԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼ ՊԱՇՏՈՆԻ ԵՆԹԱԽՄԲԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԻՑ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմում (այսուհետ՝ աշխատակազմ) համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարի կիրառման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Հավելավճարը սահմանվում է.

1) աշխատակազմի այն համայնքային ծառայողների համար, ովքեր «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ստացել են համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճաններ, և կիրառվում է ավելի բարձր դասային աստիճանը շնորհելու ամսվան հաջորդող ամսվա մեկից,

2) աշխատակազմի այն համայնքային ծառայողների համար, ովքեր մինչև սույն կարգը հաստատելը «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ստացել են համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճաններ և կիրառվում է սույն կարգը հաստատելուն հաջորդող ամսվա մեկից:

3. Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միաժամանակ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ

Հավելված N 2
Սպիտակ համայնքի ավագանու
2022 թվականի դեկտեմբերի ____-ի թիվ ____-Ա որոշման

ԿԱՐԳ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ՝ ՏՎՅԱԼ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵՐԿԱՐ ՏԱՐԻՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՍՏԱԺԻ ՀԱՄԱՐ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են համայնքային ծառայության բնագավառում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համայնքային ծառայողների՝ տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանված հավելավճարի կիրառման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Աշխատանքային ստաժի համար հավելավճարը տրվում է աշխատակազմի այն համայնքային ծառայողներին, որոնց աշխատանքային ստաժում ընդգրկվում է համայնքային ծառայության բնագավառում տվյալ աշխատակազմում ունեցած երկար տարիների (առնվազն 5 տարի) աշխատանքային ստաժ:

3. Համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միաժամանակ:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ